

նա յերկրէն Սիւնեաց, ի զաւառէն Աճանանու, ի գեղ(ջէն Սո)տանան կոչեցելոյ, կըթեալ եւ վարժեալ ի մամուլս առաքինութեան ի ներքոյ ձեռին Սրապիոնի Եղեսացոյ, որ էր կաթողիկոս սուրբ էջմիածնի:

Եւ մեք նուաստացեալքս այսոքիկ աշակերտք գոլով նորին.

Նախկին եւ առաջին՝ առաջնորդ մեծի անապատին Ստաթէի, արի եւ ճգնաղգեաց Արիստակէսն Շամբեցի²:

Երկրորդն՝ Իսրայէլ վարդապետն Մեղրեցի:

Երրորդ՝ ճշգրտահանն՝ զմըրխտահանն եւ կենդանագրող քաջ քարտուղարն եւ աստուածազարդ վարդապետաց վարդապետն Խաչատուր Կեսարացին՝ առաջնորդն մեծին Զուղայու:

Չորրորդ՝ սրբազնամաքուր եւ բազմահանճար վարդապետն Փիլիպպոս, որ եւ յետ վախճանի առն Աստուծոյ տեառն Մովսէսի եղեւ կաթողիկոս ամենայն Հայոց ի թուականիս մերում ՌՁԳ ամին, ի յաթոռս էջմիածնի, լուսաւոր հովուապետութեամբ զբազում որդիս ի փառս ածեալ ի լուսաւորութիւն սրբոյ Սիոնի: Եւ յետ ԻԱ. ամի հայ-

² Զինքը յիշելով Առ. Դաւրիժեցի Մեծ Անապատի միանձնաւորներու թուին, կը գրէ. «որ զկնի եղեւ առաջնորդ նոյն Մեծ Անապատին. եւ անդ եկաց մինչեւ ցվախճան կենաց իւրոց եւ անդէն թաղեցաւ» (էջ 253): Պէտք է շփոթել իրեն հետ Արիստակէս Բարկուշատցին, որ Տանձափարախ անապատին առաջնորդն եղաւ: